

դոյ, այսաւր յաղագս երկիւղի մահկանացու եւ ապշեալ մարդոյ մոռացեալ փոխանակիցե՞մ եւ կորնչի՞մ - քաւ լիցի - եւ լուեալ յանդիմանիցիմ բանիւն, թէ *Որ ուսուցեր¹ զբազումս՝ զանձն քո ոչ ուսուցեր^ա*: 10 Եւ վասն պատուի եւ փառաց զոր խոստանայքդ տալ՝ մեզ մի՛ լիցի² առնուլ զպատիւ ի հողեղէն եւ ի մահկանացու մարդոյ, զոր ցեց եւ ուտիճ ապականէ եւ գող ական հատանէ եւ տանի. որ զգեցեալ եմք զփառս եւ զպատիւս յերկնաւոր եւ յանմահ աշոյն Բարձրելոյ, զոր ոչ երկինք եւ ոչ երկիր եւ կամ³ որ ի նոսա պատուակաւութիւնք են՝ արժել ոչ կարեն: 11 Մի ինչ պակաս է ի մեր յերանելի⁴ փառաւորութենէս,- բաժակ մահուդ, որում իբրեւ զպասքեալ ծարաւիս փութամք ըմպել: 12 Արբուցէ՛ք վաղվաղակի, եւ թող ուրախացեալք զերծանիմք յերեւոյթից ախտարակաց կենցաղոյս. եւ մի՛ եւս այլ⁵ յերկարեալ ձգտէք զանմիտ եւ զվնասակար բանս բանդագուշեալ թագաւորին ձերոյ»:

13 Եւ սրբոյ առն Աստուծոյ Ղեւոնդի կատարեալ զիր պատասխանիսն՝ աղաչեցին զսուրբ եպիսկոպոսն զՍահակ երանելի երեցն Մուշէ եւ երանելի երեցն Արշէն եւ երանելի սարկաւազն Քաջաջ՝ ասել ցանաւրէն իշխանն եւ նոցա բանիւ, թէ «Չոր ինչ ասացին սուրբ վարդապետքն մեր եւ հոգեւոր հարքս տէր Յովսէփ եւ տէր Ղեւոնդ՝ դոյն են մեր կամք եւ խնդիրք. կատարեցէ՛ք վաղվաղակի յոր եկեալդ էք, եւ մի՛ յապաղէք. եւ խնդրեմք յԱստուծոյ պարգեւել մեզ եւ արժանի առնել զմեզ յաւիտենական պատուոյն եւ երկնից արքայութեանն»:

14 Եւ լուեալ զայս Վեհդենշապուհ եւ անաւրէն գործակցացն եւ ի սրտմտութիւն բարկութեան գրգռեալք՝ կամեցան եւ այլ պատրողական բանս եւ խաւսս ընդունայնս խաւսել ընդ սուրբ նահատակն, կարծեցեալք թերեւս կարասցեն ճեղքել զոք ի գնդէ անբակ⁶ միաբանութեանն. որում անհնար էր լինել. սկսան ստիպել եւ այլ զսուրբ եպիսկոպոսն Սահակ, զի թարգմանեսցէ նոցա եւ այլ զոր ինչ կամիցին խաւսել ընդ սուրբն: 15 Եւ սրբոյ եպիսկոպոսին Սահակայ պատասխանի տուեալ ասէ ցՎեհդենշապուհ եւ ցայլ գործակիցս նոցա, թէ «Ես որ մինչեւ ցայժմս կամակատար ծանուցայ ձեզ եւ զասացեալն ի ձէնջ թարգմանեցի սրբոցս՝ իբրեւ ոչ եթէ ձեզ եւ կամ պակշոտեալ բանից թագաւորին ձերոյ կամեցայ արբանեկել. քանզի զի՞նչ արդեաւք հարկ ի վերայ կայ մարդոյ, որոյ միտք իւր առ իւր են եւ զգայ խե-

1 ՁԱՄ. որում ուսուցեր. այսպէս ըստ ուղղագրութեան ԲԳՄ.

ա Յռոմ. Բ 21

2 ԱՄ. տալ մեզ, մի՛ լիցի

3 ՏՏ. չիք կամ

4 ՏՏ. երանելի

5 ՏՏ. չիք այլ

6 ԱՄ. զանբակ